


Երկրաշարժ իտալական ձևով

2009թ. ապրիլի 6-ին տեղական ժամանակով 03:32-ին (Գրինվիչի ժամանակով՝ 01:32) Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության սեյսմոլոգիական ցանցը գրանցել է 6.3 մագնիտուդով ըստ Ռիխտերի սանդղակի ուժեղ երկրաշարժ Իտալիայի տարածքում: Էպիկենտրոնը գտնվում էր Ակվիլա քաղաքից 7 կմ դեպի հյուսիս-արևմուտք, հիպոկենտրոնը՝ 10 կմ խորության վրա: Երկրաշարժի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 8 բալ:




Գիշերը տեղի ունեցած հզոր ցնցումը ստիպեց Ակվիլայի բնակիչներին լքել իրենց տները, սակայն այդ ժամանակ Իտալիայի իշխանությունները դեռ չէին գիտակցել կատարվածի հետևանքները: Ավելի ուշ, երբ հայտնի դարձան ավերածությունների չափը, երկրի վարչապետ Սիլվիո Բերլուսկոնիի հրամանով երկրում մտցրեց արտակարգ իրավիճակ: Երկրաշարժը զգացվել է էպիկենտրոնից 90 կմ հեռավորությամբ գտնվող Հռոմում, Մոլիզայում, Ումբրիայում, Կամպանիայում... Առավել տուժել է Աբրուցցո մարզի վարչական կենտրոն Ակվիլա քաղաքը՝ 70 հազար բնակչությամբ: Քաղաքում փլուզվել է մի քանի շենք, այդ թվում ուսանողական հանրակացարանը: Լրջորեն վնասվել են տասնյակ բնակելի շենքեր և մի քանի միջնադարյան եկեղեցի: Փրկարարները կարծում են, որ բազմաթիվ մարդիկ դեռ գտնվում են փլատակների տակ:

Նկար 1. Երկրաշարժի ուժգնությունը տարբեր բնակավայրերում:

Մոտ 100 000 իտալացի ամբողջ երկրի տարածքում մնում են փողոցներում, վախենալով նոր ուժեղ ցնցումներից, որոնք շարունակվում են մոտավորապես կես ժամը մեկ: Այդ հետցնցումներից մեկի արդյունքում տուժել է Ակվիլայի քաղաքային հիվանդանոցը, ուր տեղափոխվել էին բնական աղետի առաջին տուժածները: Վերջին տվյալներով, 272 մարդ մահացել է, 1500-ից ավելի վիրավորվել է, մոտակա բնակավայրերում փլուզվել է մոտ 10 000 շենք, այդ թվում և պատմական հուշարձաններ: Անօթևան են մոտ 17 000 մարդ, որոնց տեղավորել են վրաններում, հյուրանոցներում և բարեկամների մոտ:




Նկար 2. 2009թ. ապրիլի 6-ի երկրաշարժի հետևանքով վնասված պատմամշակութային հուշարձաններ:



Նկար 3. Իտալիայի սեյսմիկ շրջանացման քարտեզը:

Կարելի էր արդյոք կանխատեսել այդ երկրաշարժը: Կիրակի ապրիլի 5-ին, գլխավոր ցնցումի նախօրեին, տեղի ունեցավ երկու թույլ ցնցում, սակայն դա դիտվեց որպես սովորական երևույթ սեյսմաակտիվ գոտում: Իտալացի սեյսմաբանների կարծիքով, երկրաշարժի պատճառ կարող էր հանդիսանալ Աֆրիկյան և Եվրասիական լիթոսֆերային սալերի տեղաշարժը, որոնց շփման սահմանը գտնվում է Ապենինյան թերակղզուց փոքր ինչ հարավ: Սալերի այդ տեղաշարժը կատարվել է Ապենինյան լեռնաշղթայի երկայնքով անցնող երկրաբանական խզվածքի երկայնքով: Այս երկրաշարժը ամենաավերիչն է Իտալիայում վերջին 30 տարիների ընթացքում:

Ամենածանր հետևանքները թողել են Հարավային Իտալիայում 1980թ. նոյեմբերի 23-ին տեղի ունեցած մինչև 6.8 մագնիտուդով յոթ սեյսմիկ ցնցումները: Այն ժամանակ մահացավ 3 000 մարդ, անօթևան մնացին 200 000 իտալացի: 2009թ. ապրիլի 6-ի երկրաշարժի հետևանքները ճշտվելու են, և նրա զոհերի չոր թվերը, հավանաբար, մեծանալու են:



Նկար 4. Երկրաշարժերի էպիկենտրոնները Իտալիայի և հարակից տարածքներում:

Հ. Պետրոսյան,
Մ. Ենանով,
ՄՊԱԾ գործակալություն